

## ԿԱՐԾԻՔ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Արփինե Սանասարի Հակոբյանի «Ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման ուղիները կառավարչական հաշվառման համակարգում (ՀՀ առևտրային կազմակերպությունների նյութերով)» թեմայով Ը.00.03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

#### Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը

Արփինե Սանասարի Հակոբյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման կատարելագործման հիմնախնդիրների հետազոտությանը և դրանց վերաբերյալ լուծման արդյունավետ ուղիների առաջարկմանը:

Առևտրային կազմակերպություններում ֆինանսական տեղեկատվությունը ներառում է վերլուծական և այլ տվյալներ կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ցուցանիշների, ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին:

Կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման կառուցակարգը պայմանավորված է ծախսերի հաշվառման և ինքնարժեքի հաշվարկման ընտրված մոտեցումներով, որտեղ հատկապես էական դեր ունեն անուղղակի ծախսումների, մասնավորապես՝ դրանց բաշխման առանձնահատկությունների, ազդեցության, ինքնարժեքի ձևավորման և այլնի մասին տեղեկությունները:

Ուժի մեջ մտած IFRS-S շարքի ստանդարտների պայմաններում, որոնք ֆինանսական տեղեկատվության կառավարման շրջանակը կապում են կազմակերպության ռիսկերն ու հնարավորությունները հաշվի առնող ռազմավարությանը, անհրաժեշտություն է առաջանում մշակել ինչպես ինքնարժեքի, այնպես էլ ամբողջ կազմակերպության մակարդակով որոշումների կայացմանն աջակցող ցուցանիշների սահմանման և հաշվետվողականության ձևավորման վերաբերյալ ֆինանսական

տեղեկատվության կառավարման կառուցակարգերի կատարելագործման նոր մոտեցումներ:

« առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում ինչպես ավանդական, այնպես էլ կայուն զարգացման հայեցակարգի դրույթներով առկա է ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ուղղված նոր լուծումների անհրաժեշտություն: Բերված փաստարկներով ատենախոսը հիմնավորել է ընտրված թեմայի հրատապությունը և արդիականությունը:

### **Հետազոտության նպատակը և խնդիրները**

Հետազոտության նպատակն է « առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման արդիական հայեցակարգի մշակումը, որին հասնելու համար ատենախոսի կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել ֆինանսական տեղեկատվության շրջանակը, կառավարման մեխանիզմները, հիմնախնդիրներն ու նպատակադրումները « առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում,
- գործարարության զարգացման ներկա միտումների համատեքստում առաջարկել հետահայաց բնույթ ունեցող տեղեկատվական համակարգից անցում դեպի տեսանելի ապագային ուղղված և կայուն զարգացման նպատակադրումներով ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգ,
- մշակել կառավարչական հաշվառման քաղաքականության դրույթներ և առևտրային կազմակերպություններում դրանց ներդրման հնարավոր ուղղություններ,
- ձևավորվող հաշվապահական ներքին և արտաքին հաշվետվական հոսքերից տարբերակել կառավարչական հաշվառման համակարգում տեղեկատվության հաշվետվական նպատակներն ու ուղղությունները՝ ESG (բնապահպանական, սոցիալական, կառավարչական) հայեցակարգի համատեքստում,
- կայուն զարգացմանն առնչվող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS-S) կարգաբերումներին համապատասխան՝ ներկայացնել գործունեության հիմնական ցուցանիշներով ռազմավարական

նպատակադրումների կատարողականի վերլուծության և գնահատման կառուցակարգ,

- կայուն զարգացման գործունեության առանցքային ցուցանիշների ներառմամբ առաջարկել ռազմավարական նպատակադրումների կատարողականի համապարփակ գնահատման մոտեցում,
- մշակել անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության կառավարման մեխանիզմ,
- առաջարկել առևտրային կազմակերպությունների գործարարության կայուն զարգացման մշտադիտարկման ընդհանրացված ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանություն:

### **Հետազոտության օբյեկտը և առարկան**

**Հեղազոտության օբյեկտը** ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգն է, **իսկ առարկան՝** այդ համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման հիմնահարցերը:

### **Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը**

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

- մշակվել են կառավարչական հաշվառման քաղաքականության դրույթներ և դրանց ներդրման մոտեցումներ՝ առաջարկելով ավանդական, հետահայաց բնույթ ունեցող տեղեկատվական համակարգից դեպի տեսանելի ապագային ուղղված և կայուն զարգացման նպատակադրումներին ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգ,
- կայունությանն առնչվող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS-S) նպատակադրումներին համապատասխան՝ մշակվել են կայուն զարգացման կառավարչական հաշվետվողականության մոտեցումներ՝ ներառելով բնապահպանական, սոցիալական և կառավարչական

տեղեկատվական ուղղակարական ինտեգրված հոսքեր, հնարավորություն ստեղծելով վերլուծելու և գնահատելու ESG կատարողականի ցուցանիշները,

- ներկայացվել է անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության կառավարման մեխանիզմ՝ այդ ծախսումների խմբավորման, և ըստ գործառույթի ինքնարժեքին վերագրման արժեհաշվարկի մոտեցմամբ,
- մշակվել է առևտրային կազմակերպությունների կայուն զարգացման գնահատման մեթոդաբանություն՝ կիրառելով բնապահպանական, սոցիալական և կառավարչական ինտեգրալային ցուցանիշ, որը հնարավորություն է ստեղծում մշտադիտարկելու ESG կատարողականը:

### **Հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը**

#### **և գործնական նշանակությունը**

Ա. Ս. Հակոբյանի ատենախոսությունն իրենից ներկայացնում է առևտրային կազմակերպություններում կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների ներդրման՝ մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված առևտրային կազմակերպություններում կառավարչական հաշվառման համակարգի զարգացման նպատակադրումներին և այդ համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման բարելավմանը::

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ առևտրային կազմակերպություններում՝ նպաստելով կռավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման արդյունավետության բարելավմանը: Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլվել են հեղինակի 17 հրապարակումներում:

#### **Ատենախոսության ծավալը և կառուցվածքը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն և առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականությունից և հավելվածներից:

Աշխատության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության գլխավոր նպատակը և խնդիրները, ներկայացվել են հիմնական գիտական արդյունքները և դրանց գործնական նշանակությունը, տրվել են ատենախոսության տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Առաջին՝ «Ֆինանսական տեղեկատվության կառավարման տեսամեթոդական հիմքերը կառավարչական հաշվառման համակարգում և հիմնախնդիրները ՀՀ առևտրային կազմակերպություններում» գլխում ատենախոսն ուսումնասիրել է ֆինանսական տեղեկատվության շրջանակը, կառավարման մեխանիզմները և նպատակադրումները, վեր են հանվել այդ տեղեկատվության կառավարման հիմնախնդիրները հաշվառման զարգացման ներկա պայմաններում: Այս գլխի երեք ենթահարցերում ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում վերլուծվել և քննարկվել են ֆինանսական տեղեկատվության կառավարման մոտեցումները և լուծում պահանջող հիմնախնդիրները:

Երկրորդ՝ «Ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման ուղիները ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում» գլխում միջազգային լավագույն փորձի դիտարկմամբ ատենախոսը քննարկել է կառավարչական հաշվառման կարգավորման անհրաժեշտությունը և նպատակադրումները ֆինանսական տեղեկատվության կառավարման բարելավման համատեքստում: Ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմ ներկայացվել են կառավարչական հաշվառման քաղաքականության դրույթները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել ինքնարժեքի մասին տեղեկատվության բարելավման հիմնահարցին:

Երրորդ՝ «Կայուն զարգացման նպատակադրումներով ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգի կառուցումը» գլխում ատենախոսը ներկայացրել է անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության կառավարման մշակված մեխանիզմը, առաջարկել է կայուն զարգացման կառավարչական հաշվետվողականության և առևտրային կազմակերպություններում կայուն զարգացման ընդհանրացված ցուցանիշի հաշվարկման մոտեցումներ: Ատենախոսի առաջարկած ծախսային կրիչների համակարգի կիրառմամբ անուղղակի ծախսումների՝ արժեհաշվարկի օբյեկտներին վերագրումն ապահովում է կիրառվող ավանդական բաշխման բազաներով մոտեցմամբ ստացված արդյունքների համեմատությամբ՝

արժեհաշվարկի օբյեկտների ինքնարժեքի մասին առավել ճշգրիտ տեղեկատվության ձևավորումը: Դա հատկապես օգտակար է գնագոյացման հետ կապված որոշումները հիմնավորելիս:

ESG գաղափարախոսության բոլոր տարրերը տարրալուծող ատենախոսի առաջարկած մոտեցման կիրառումը նպաստում է առևտրային կազմակերպության ռազմավարության ընկալմանը և դրա կատարողականի բարձրացմանը՝ նշանակալիորեն բարելավելով հաշվառման դասական համակարգը, միաժամանակ չուճացնելով ներտնտեսական հաշվետվողականության նպատակով արդեն իսկ ձևավորվող տեղեկատվական հոսքերը:

Եզրակացություն և առաջարկություններ բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված տեսական և գործնական բնույթի առաջարկություններ:

### **Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ**

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը գերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

1. Ատենախոսությունում որպես գիտական նորույթ ներկայացված առաջին դրույթը՝ «... մշակվել են կառավարչական հաշվառման քաղաքականության դրույթներ և դրանց ներդրման մոտեցումներ՝ առաջարկելով ավանդական, հետահայաց բնույթ ունեցող տեղեկատվական համակարգից դեպի տեսանելի ապագային ուղղված և կայուն զարգացման նպատակադրումներին ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգ:...» լրացուցիչ պարզաբանման և հիմնավորման կարիք ունի: Մասնավորապես, առաջարկվող մոտեցմամբ հստակեցման անհրաժեշտություն ունի առաջին հերթին դեպի տեսանելի ապագային ուղղված և կայուն զարգացման նպատակադրումներին ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգի հաշվառման մեթոդական հիմքը և ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքների տարանջատման մեխանիզմը, ի վերջո փողի ժամանակային արժեքի հիմնադրույթի կիրառումը:

2. Ատենախոսության մեջ հեղինակը իր վերլուծությունը կատարել է տարբեր ոլորտների ՀՀ առևտրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա, որը առաջարկված մի շարք լուծումների և մշակված մոտեցումների տեսանկյունից առաջ է բերում բազմաթիվ հարցեր: Կարծում ենք, որ ուսումնասիրված առևտրային կազմակերպությունների ոլորտային համակարգումը ավելի կարժևորեր ատենախոսության մեջ առաջարկված հեղինակային լուծումները:
3. Ատենախոսության 23 էջում հեղինակը նշում է, որ «... ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում տեղեկատվության կառավարման մեխանիզմները դիտարկելիս նկատվում է դրանց կենտրոնացումը՝ տեղեկատվության գործառնական նպատակներով հավաքագրման, մշակման և հաշվետվությունների կազմման վրա, իսկ ռազմավարական ուղղվածություն ունեցող կառավարման մեխանիզմները շատ հաճախ բացակայում են:...»: Կարծում ենք, որ կատարված հեղինակային դիտարկումն առավել խորքային կլիներ, եթե ռազմավարական նպատակով տեղեկատվության կառավարման համար ներտնտեսական հաշվետվությունների պատրաստման նոր մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը դիտարկվեր կորպորատիվ կառավարման սկզբունքների և, մասնավորապես, սեփականատերերի շահերի հետ կապի համատեքստում ևս:
4. Ատենախոսության 39 էջում հեղինակը նշում է, որ «... Հաշվապահների, ֆինանսական տնօրենների շրջանում անցկացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ կազմակերպություններում՝ կախված արտադրության բնույթից, անուղղակի ծախսումների բաշխման մեկ հիմնական բազա է կիրառվում: Հարցված կազմակերպությունների միայն քիչ տոկոսի դեպքում է նշվում, որ անուղղակի ծախսումների բաշխումը կատարվում է ըստ էության ABC (Activity Based Costing, ըստ գործունեության տեսակի (ԸԳՏ) ծախսերի հաշվառում) մեթոդով: Հարցվողների շրջանում չնայած որ մեթոդի անվանումը հայտնի չէ, այնուհանդերձ մի շարք կազմակերպություններում դրա տարրերը կիրառվում են:...»: Նշվածի վերաբերյալ հստակ չէ, թե ինչ սկզբունքով է հարցումը կազմակերպվել, ինչ ընտրանք է այն ներառել և ինչպես է տվյալների ընդհանրացումը կատարվել:

5. Ատենախոսության 39 էջում հեղինակը նշում է, որ «... Հայաստանում մասնագիտացված կառույցի ստեղծումը կնպաստի կառավարչական հաշվառման զարգացման նպատակների կատարմանը՝ ներառելով ֆինանսական տեղեկատվության կառավարման մեթոդաբանության հարցերի բարելավումը:...»: Հստակ նշված չէ, թե ինչ սկզբունքներով պետք է ձևավորվի այդ կառույցը և ինչ հիմնական գործառույթներ պետք է իրականացնի:
6. Ատենախոսության 106 էջում հեղինակը նշում է, որ «...Ամփոփ ցուցանիշի հաշվարկման համար անհրաժեշտ է ընտրել միայն այն ցուցանիշները, որոնք տվյալ պահին համապատասխանում են կազմակերպության ռազմավարական նպատակներին:...»: Եթե ամփոփ ցուցանիշի հաշվարկը կատարվում է նշված մոտեցմամբ, ապա հարց է առաջանում, թե ինչպես է պահպանվում նույնիսկ նույն ճյուղի կազմակերպությունների համադերժությունը: Ինչ գործիքներ են անհրաժեշտ սուբյեկտիվությունը չեզոքացնելու համար:
7. Հեղինակի կողմից առաջարկված կատարելագործման ուղիներին լրացնող կարող էին լինել ներկա պայմաններում խիստ արժորվող արհեստական բանականության վրա հիմնված լուծումները:

## **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Ատենախոս Ա. Ս. Հակոբյանը կատարել է ուշագրավ, ծավալուն, տեսամեթոդական և կիրառական բնույթի մոտեցումներ պարունակող հետազոտություն: Այն կարելի է որակել, որպես ինքնուրույն կատարված հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման տեսական և գործնական հեղինակի կողմից տարբերակված մի շարք կարևոր խնդիրներ:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներով և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական 17 հոդվածներում, որպես գիտական նորույթ ներկայացված դրույթները ստացել են իրենց լուսաբանումը:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, «Ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման ուղիները կառավարչական հաշվառման համակարգում (« առևտրային կազմակերպությունների նյութերով)» թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Արփինե Սանասարի Հակոբյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս,**

**տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**



**Ա.Վ.Մաթևոսյան**

**Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Վ. Մաթևոսյանի ստորագրությունը**

**հաստատում եմ**

**ՀՊՏՀ գիտ. քարտուղար**

**01.09.2025թ.**



**Ն.Ն.Դարբինյան**

